



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2017 թվականի N 37 - Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ,
ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՅԻ
ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ, 13-րդ հոդվածի 1-ին, 14-րդ հոդվածի 2-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին վճարվում են՝

ա. ընտանեկան նպաստը,

բ. սոցիալական նպաստը,

գ. հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնություն և եռամսյակային հրատապ օգնություն.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար նախատեսված գումարների 97 տոկոսը նպատակաուղղվում է ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի համար, ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնությանը, իսկ 3 տոկոսը՝ եռամսյակային հրատապ օգնության վճարմանը.

3) սահմանամերձ բնակավայրեր են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի N 163 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված բնակավայրերը:

2. Հաստատել ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերն ըստ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների)՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցները՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել ընտանեկան նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորը, ընտանեկան նպաստի բազային մասի չափը, 18 տարին չլրացած անդամին տրվող հավելման տարբերակման պայմաններն ու տարբերակված չափերը՝

1) ընտանեկան նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը՝ 30.00 միավոր.

2) ընտանեկան նպաստի բազային մասը՝ 18000 դրամ.

3) 30.01-35.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ,

բ. չորս և ավելի՝ 18 տարին չլրացած անդամ ունեցող ընտանիքների (այսուհետ՝ բազմազավակ ընտանիք) յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ.

4) 35.01-39.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ.

5) 39.01 և ավելի անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 8000 դրամ:

4. Սահմանել սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորը և չափը`

1) սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը` 30.00 միավոր.

2) սոցիալական նպաստի չափը` 18000 դրամ:

5. Սահմանել հրատապ օգնությունների չափերը`

1) միանվագ հրատապ օգնության չափերը`

ա. երեխայի ծննդյան դեպքում` 50000 դրամ,

բ. երեխայի` առաջին դասարան ընդունվելու դեպքում` 25000 դրամ,

գ. ընտանիքի անդամի մահվան դեպքում` 50000 դրամ.

2) եռամսյակային հրատապ օգնության ամսական չափը` 18000 դրամ:

6. Սահմանել մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը` 18000 դրամ:

7. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների` մինչև 0,2 տոկոսն ուղղել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընտանեկան, սոցիալական նպաստի և հրատապ օգնության նշանակման և վճարման աշխատանքների համար իրականացվող լրացուցիչ ծախսերին (մեթոդական և հրահանգչական նյութերի բազմացման, գրասենյակային ապրանքների, սարքավորումների, տեխնիկայի և նյութերի, գործուղման, կապի, էլեկտրաէներգիայի, տրանսպորտի և այլ ծախսեր):

8. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետին, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ, 2017 թվականի չորրորդ եռամսյակում, ըստ անհրաժեշտության, կատարել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ֆինանսական

միջոցների վերաբաշխում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) միջև՝ ընդհանուր միջոցների մեկ տոկոսի սահմաններում:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հունվարի 27
Երևան



Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 26-ի N 37 - Ն որոշման

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱԺԻՆՆԵՐԻ)

Մարզը	Տարածքային մարմինը	2017 թվական			
		2017 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարի բաշխումը (դրամ)	այդ թվում՝ ընտանեկան նպաստի համար նախատեսված միջին ամսական գումար (դրամ)	այդ թվում՝ սոցիալական նպաստի համար նախատեսված միջին ամսական գումար (դրամ)	այդ թվում՝ միանվագ հրատապ օգնությունների, եռամսյակային հրատապ օգնության (3%) համար նախատեսված ամսական գումարի բաշխումը (դրամ)
ԱՐԱՐԱՏ	ԱՐԱՐԱՏ	195,771,141	12,874,250	2,736,000	704,011
	ԱՐՏԱՇԱՏ	1,164,576,048	82,756,063	9,918,000	4,373,940
	ՎԵԴԻ	1,046,962,144	77,737,022	5,382,000	4,127,822
	ՄԱՍԻՍ	975,581,048	69,458,301	8,172,000	3,668,119
	Ընդամենը	3,382,890,380	242,825,636	26,208,000	12,873,893
ԱՐԱԳԱԾՈՏԻ	ԱՇՏԱՐԱՎ	1,105,503,396	79,267,607	8,946,000	3,911,675
	ԱՊԱՐԱՆ	332,066,021	23,426,003	2,916,000	1,330,165
	ԾԱՂԿԱՀՈՎԻՏ	296,132,137	22,928,764	594,000	1,154,914
	ԹԱԼԻՆ	602,880,547	43,814,427	4,158,000	2,267,618
	Ընդամենը	2,336,582,102	169,436,801	16,614,000	8,664,372
ԱՐՄԱՎԻՐԻ	ԱՐՄԱՎԻՐ	890,069,415	62,521,610	8,334,000	3,316,840
	ՎԱՂԱՐՇԱՊԱՏ	1,159,235,431	81,515,280	10,800,000	4,287,672
	ԲԱՂՐԱՍՅԱՆ	277,379,810	20,283,868	1,746,000	1,085,116
	Ընդամենը	2,326,684,656	164,320,758	20,880,000	8,689,628
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ	ԳԱՎԱՌ	1,111,100,661	82,544,552	5,634,000	4,413,168
	ՍԵՎԱՆ	706,628,017	49,687,181	6,534,000	2,664,487
	ՎԱՐԴԵՆԻՍ	1,222,137,566	89,350,119	7,956,000	4,538,677
	ՃԱՄԲԱՐԱՎ	368,109,593	24,726,525	4,554,000	1,395,274
	ՄԱՐՏՈՒՆԻ	2,183,058,807	166,870,085	6,498,000	8,553,480
	Ընդամենը	5,591,034,644	413,178,462	31,176,000	21,565,086
ԼՈՌՈՒ	ԹՈՒՄԱՆՅԱՆ	666,200,134	40,832,344	12,348,000	2,336,334
	ՏԱՇԻՐ	555,219,670	37,069,923	7,002,000	2,196,382
	ՎԱՆԱԶՈՐ	2,405,222,072	149,820,949	41,922,000	8,692,222
	ՍՊԻՏԱԿ	1,735,406,505	115,817,774	21,438,000	7,361,433
	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ	1,637,600,272	115,469,354	15,570,000	5,427,334
	Ընդամենը	6,999,648,654	459,010,344	98,280,000	26,013,705
ԿՈՏԱՅՔԻ	ԱԲՈՎՅԱՆ	1,228,413,190	84,110,815	13,788,000	4,468,950
	ՀՐԱԶՂԱՆ	963,998,885	66,942,909	9,972,000	3,418,331
	ՉԱՐԵՆՅԱՎԱՆ	556,984,257	38,339,477	6,048,000	2,027,877
	ՆԱԻՐԻ	832,021,224	60,631,798	5,742,000	2,961,303
	Ընդամենը	3,581,417,555	250,024,999	35,550,000	12,876,460

ՇԻՐԱԿԻ	ԱՐԹԻԿ	954,745,720	68,619,941	7,362,000	3,593,514
	ԱՄԱՍԻԱ	65,612,378	4,464,334	756,000	247,364
	ՄԱՐԱԼԻԿ	402,786,862	29,238,521	2,718,000	1,609,050
	ԱԽՈՒՐՅԱՆ	556,264,365	40,496,619	3,816,000	2,042,744
	ԱՇՈՑՔ	96,603,929	6,825,455	846,000	383,310
	ԳՅՈՒՄՐԻ-1	1,534,930,511	99,427,157	22,680,000	5,812,592
	ԳՅՈՒՄՐԻ-2	1,913,630,818	124,744,915	27,504,000	7,193,695
	Ընդամենը	5,524,574,583	373,816,941	65,682,000	20,882,270
ՍՅՈՒՆԻՔԻ	ԳՈՐԻՍ	621,675,471	43,438,521	6,084,000	2,270,456
	ԿԱՊԱՆ	350,197,495	18,188,435	9,936,000	1,063,127
	ՄԵՂՐԻ	111,961,263	6,449,089	2,520,000	365,453
	ՍԻՍԻԱՆ	230,044,801	16,479,842	1,926,000	768,995
	Ընդամենը	1,313,879,031	84,555,887	20,466,000	4,468,031
ՏԱՎՈՒՇԻ	ԴԻԼԻՋԱՆ	464,164,019	31,061,924	5,958,000	1,660,410
	ԻԶԵՎԱՆ	726,832,906	50,396,326	7,506,000	2,667,082
	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ	396,957,443	26,332,476	5,382,000	1,365,310
	ԲԵՂ	438,705,837	30,560,221	4,356,000	1,642,598
Ընդամենը	2,026,660,205	138,350,948	23,202,000	7,335,400	
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ	ԶԵՐՍՈՒԿ	79,341,437	5,092,129	1,242,000	273,220
	ՎԱՅՔ	154,270,875	10,628,646	1,602,000	625,261
	ԵՂԵԳՆԱԶՈՐ	492,450,651	33,640,565	5,616,000	1,785,426
	Ընդամենը	726,062,963	49,361,339	8,460,000	2,683,907
ԵՐԵՎԱՆԻ	ԱԶԱՓՆՅԱԿ	746,714,057	44,587,136	15,066,000	2,573,035
	ԱՎԱՆ	251,022,829	13,998,845	6,138,000	781,724
	ԱՐԱԲԿԻՐ	350,135,729	11,526,138	16,614,000	1,037,839
	ԴԱՎԹԱՇԵՆ	244,589,595	16,273,242	3,204,000	905,224
	ԷՐԵՔՈՒՆԻ	679,199,717	40,803,893	13,446,000	2,350,083
	ԿԵՆՏՐՈՆ	579,538,378	26,500,685	19,962,000	1,832,179
	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱ	775,430,921	49,714,749	12,168,000	2,736,494
	ՆՈՐ-ՆՈՐՔ	582,297,608	32,145,306	14,580,000	1,799,494
	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ	72,943,346	4,015,754	1,818,000	244,858
	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	105,441,771	6,842,626	1,566,000	378,188
	ՇԵՆԳԱՎԻԹ	901,352,333	51,094,229	20,988,000	3,030,464
	ՔԱՆԱՔԵՆ-ԶԵՅՈՒՆ	400,245,942	22,675,963	9,396,000	1,281,865
	Ընդամենը	5,688,912,227	320,178,567	134,946,000	18,951,447
	Ընդամենը	39,498,346,600	2,665,060,684	481,464,000	145,004,200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

